Ա. Երուսաղէմի պատրիարքն է որ Եգիպտոս ուղևորելուն առիթով կը միջնորդէ Վահրամ (ըստ տրաբաց, Պահրամ) Վզրուկին մօտ ու բանտէն կ'ազատէ Ֆրանկ իշխանը. ու կը վերադարձնէ Երուսաղէմ։ Վահրամ Եգիպտոսի Սուլթանին մեծ ծառայութիւն մատուցած էր և մեծ ազդեցութիւն ունէր Եգիպտոսի մէջ. Վահրամ և եղբայրը Վասակ Գրիգոր կթղ. Պահլաւունիի և Ներսէս Շնորհալիի հօրեղբայրներն էին. առաջինը, ինչպէս ըսինք, սուլթանին վզրուկն էր Գահիրէի մէջ և երկրորդը կ'ապրէր Թեբէի մօտերը. Վահրամի մասին տեսնել (Շնորհ. էջ 163—168. նաև Historiens Orientaux des Croisades, Tome. III. էջ 408 և 417)։

ԵՍԱՅԻ Բ. ՊԵ.— (1391—1394)։ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին աւագ դրան վրայ զետեղուած է երկաթագիր յիշատակարան մը, ուր պէտք է յիշուած ըլլար Եսայի Բ. պատրիարքը.

«Տաճարս Աստուծոյ։ Ի սկզբան կառուցաւ սուրբ տաճարս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի
մերոյ ի հայրապետութեան հայոց Տ. Թէոդորոսի Սրբազան կաթողիկոսի եւ ի
Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տ. Եսայիայ Արքեպիսկոպոսի առաջնոյ, գնեալ տեղիս սրբոյ
Տաճարիս ի Ճենովայեցոց կոմս անուն Բարեպաշտ վաճառականի ուրումն.
Քէֆէ քաղաքին Ղըրիմու՝ յամի տեառն 1436»։

Ուրիշ յիշատակարանի մը համաձայն, Կոմս անունը Կոգնաս է։ Այս յիշատակարանին մէջ յիշատակուած կաթողիկոսն է Թէոդորոս Բ. (Կիլիկիա) 1377—1392, սոյն թուականին համաձայն, հողի գընումին և եկեղեցիի շինութեան ժամանակ Երուսաղէմի պատրիարքը պէտք է ընդունիլ ոչ թէ Եսայի Ա. այլ Եսայի Բ. որուն իշխանութիւնը տևած է 1391—1394։ 1436 թուականը չի յարմարիր ո՛չ Թէոդորոս Բ. կթղ.ին և ոչ ալ Եսայի Ա. պտրք.ին. հետևապէս պէտք է ուղղել այս սխալը որ չփոխուիթենէ յառաջ եկած կը թուի։ Տեսնել այս մասին (Կողոs. էջ 109—112. Հա. 1928 էջ 355—359)։